ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 31-Ա

,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ (ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ) ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ,,Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպության ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ Ազատամարտիկների փողոց 27 հասցեում գտնվող ,,ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի (մասնաշենքերի) տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ 2019 թվականին տրված եզրակացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2021 թվականի փետրվարի 13-ին տեղի ունեցած երկրաշարժից հետո էլ ավելի է վատթարացել շենքի(մասնաշենքերի) տեխնիկական վիճակը՝ անհնարին դարձնելով հետագա շահագործումը, հաշվի առնելով ,,Քրեագետ,, դատական և անկախ փորձաքննությունների կենտրոնի 2021 թվականի մարտի 22-ի N՞-012-02-21 գրությամբ ներկայացված հաշվետվությունը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սուրեն Ամիրջանյանի 24.03.2021թ. N50 զեկուցագիրը և նույն հասցեում նոր մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտությունը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում ապամոնտաժել ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ Ազատամարտիկների փողոց 27 հասցեում

գտնվող ,,ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը (մասնաշենքերը):

2.Ապամոնտաժման աշխատանքները իրականացնել աճուրդային կարգով՝ հետևյալ պայմանով.

ա) ապամոնտաժման աշխատանքները իրականացնել շենքի (մասնաշենքերի) օգտակար նյութերի հաշվին,

բ) ապամոնտաժման աշխատանքների ծախսերի և օգտակար նյութերի արժեքի տարբերությունը վճարել համայնքի բյուջե՝ հիմք ընդունելով ,,Քրեագետ,, դատական և անկախ փորձաքննությունների կենտրոնի 2021 թվականի մարտի 22-ի N-012-02-21 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

գ)մեկնարկային գին սահմանել 7.000.000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

3.Ապամոնտաժման աշխատանքներն ընդունելուց հետո հանել համայնքի հաշվեկշռից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ